Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի համայնքապետարանը, այսուհետ Կազմակերպիչ, 2024թ.–ի սեպտեմբերի 25-ին, ժամը՝ 11:00-ին համայնքապետարանի վարչական շենքում կիրականացնի համայնքային սեփականություն հանդիսացող հողերի աճուրդ վաճառքի մրցույթ:

ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔ

լոտ 1. Եղեգնաձոր համայնք, ք., Եղեգնաձոր Կամոյի փողոց, 2/17 հողամաս ծածկագիր՝ 10-001-0170-0078, 0.00314 հա, 139 473 ՀՀ դրամ մեկնարկային գնով, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման:

լոտ 2. Եղեգնաձոր համայնք, ք.,Եղեգնաձոր Վարդան Զորավարի փողոց 12/4 հողամաս, ծածկագիր՝ 10-001-0135-0099, 0. 02062 հա, 595 402 ՀՀ դրամ մեկնարկային գնով, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման:

լոտ 3. Եղեգնաձոր համայնք, ք.,Եղեգնաձոր, ծածկագիր՝ 10-001-0354-0044, 1. 22805 հա, 423 700 ՀՀ դրամ մեկնարկային գնով, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական կորիզավոր:

Հողամասերի նկատմամբ սերվիտուտներ և այլ սահմանափակումներ չկան: Աճուրդն անցկացվելու է դասական եղանակով՝ մեկնարկային գնի 5 %-ից ոչ պակաս չափով: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը համարվում է աճուրդի հաղթող:

Աճուրդին և մրցույթին մասնակցելու իրավունք ունեն՝ ՀՀ քաղաքացիներն ու իրավաբանական անձինք և ՀՀ օրենսդրությամբ սահմանված հողի սեփականության իրավունքի այլ սուբյեկտներ և հողօգտագործողներ, ովքեր համայնքապետարան են ներկայացրել՝

-աճուրդին մասնակցելու հայտ

-աճուրդի մասնակցության վճարի անդորրագիր՝ 10000 ՀՀ դրամ

-անձը հաստատող փաստաթուղթ, իսկ իրավաբանական անձինք հիմնադիր փաստաթղթերի պատճենները և լիազորությունները հաստատող փաստաթղթերը

-աճուրդի նախավճարի մուծման անդորրագիրը, որը կազմում է վաճառվող լոտի մեկնարկային գնի 50%-ը և մուծվում է կազմակերպչի նշված հաշվեհամարին աճուրդի անցկացման օրը:

Հայտերի ընդունումը դադարեցվում է աճուրդից 3 աշխատանքային օր առաջ: Հայտերի ընդունման վերջնաժամկետն է 2024 թվականի սեպտեմբերի 19-ը, ժամը՝ 18:00-ն: Հայտերն ընդունվում են ամեն օր ժամը 9:00-18:00 ընկած ժամանակահատվածում /բացառությամբ 13:00-14:00 ընկած ժամանակահատվածը/:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Եղեգնաձորի համայնքապետարան կամ զանգահարել 028122020 հեռախոսահամարով:

Հասցե՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, Եղեգնաձոր համայնք
Հեռ. +37428122020, +37428125183, էլ. փոստ՝
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am